ՀԻՆԳՇԱԲԹԻ 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1881—№ 199

№—199 ՀԻՆԳՇԱԲԹԻ 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1881

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

# ՄԵՂՈՒ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ

Խմբագրութեանս ուղղած թէ՛ յօդուածները եւ թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 1½ կոպէկ։
Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը եւ պ. Շահփերդեանի տպարանում։
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ՔՍԱՆԵՒՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Խօլէրան եւ նրա դէմ ապահովութիւն։
Ազգային.— Թղթակցութիւն Ս.-Պետերբուրգից։
Քաղաքական.— Բուլղարիա. — Քաղաքական լուրեր։
Մեղուի հեռագիրներ։
Մանր լուրեր։
Յայտարարութիւններ։

ԹԻՖԼԻՍ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1881 Թ.

—

## ԽՕԼԷՐԱՆ ԵՒ ՆՐԱ ԴԷՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ.

Կրկին արեւելքից մէկ նոր ցաւ է սպառնում մարդկային ցեղին։ Խօլէրան թէ Չինաստանի Հօնկօնգում եւ Շանխայում եւ թէ՛ կարմիր ծովի մօտ Ադէնում բարձրացրել է իւր գլուխը եւ շատ զոհեր է տանում։ Թիւրք կառավարութիւնը ինչպէս եւ միշտ, այժմս էլ այդ ցաւալի եւ ամեն կերպ մարդկութեան գոյութեան վտանգաւոր ժանտախտի դէմ ոչինչ ապահովութեան միջոցներ գործ չէ դրել։ Այն ինչ հէնց որ խօլէրայի լուրը տարածուեցաւ Եւրօպայում՝ ամեն տէրութիւններ ըսկսան զգուշութիւն, կարանտինի միջոցներ կարգադրել։ Ֆրանսիական դեսպանապետ պ. Տիսսօն պահանջեց Բ. Դռնից, որ նա ամեն ապահովութեան միջոցներ գործ դնէ խօլէրայի դէմ։

Կարմիր ծովի վերայ Ադէն քաղաքը ասիական քաղաքի ամեն կեղտոտութիւնները ունենալով՝ նոյնպէս ամեն կերպ յարմար է հակաառողջական պայմաններին։ Ջուրը վատ է, որովհետեւ աղբիւրի ջուր չը կայ, ծովի ջուրը մաքրում և գործ են ածում բնակիչները. բացի այդ, այդտեղ հաւաքվում են աշխատանքի համար Արաբիայի ամեն կողմից եկւորներ իրենց հետ բերելով ամեն տեսակ ցաւեր, նոյնպէս այդտեղ անցնում են բոլոր մահմէտական աշխարհի ուխտաւորները։ Հիմա այդ քաղաքումը խօլէրան տիրում է։ Ասիայից Եւրօպա գնացող բոլոր նաւերը պէտք է որ այդ քաղաքի նաւահանգիստով անցնեն։ Ուրեմն հեշտ է հասկանալ, թէ ինչպէս շուտ կարող է Ադէնից խօլէրան տարածուել Փոքր-Ասիա, Հայաստան, Կովկաս, Պօլիս եւ այդպէս ամբողջ Եւրօպա։ 1866-ի խօլէրան նոյնպէս այդտեղից տարածուեցաւ եւ այնչափ զոհեր տարաւ։ Ապացուցուած է, որ խօլէրան քամիներով, օդով չէ տարածվում, որը չէ տանում վարակող նիւթերը, այլ խօլէրայի տարածողները այդ ցաւով վարակուած անձինքներն են, որոնք այս ինչ տեղում ցաւը ստանում են, եւ տեղափոխուելով մէկ ուրիշ տեղ ցաւը բացվում է եւ մեռնում են, եւ այդպիսով ուրիշներին էլ վարակում են։

Որովհետեւ հիմա հաղորդակցութիւնները հեշտացել են, շոգենաւերը, երկաթուղիները աւելի դիւրութեամբ մարդիկներին մէկ տեղից միւս տեղն են փոխադրում, մարդիկ աւելի հեշտ են միմեանց մօտենում, այդ պատճառով այդ ցաւն էլ աւելի արագութեամբ է տարածվում։

Նոյնպէս հաստատ է, որ այն երկիրներում, այն քաղաքներում, այն տեղերում, ուր կեանքը, կեցութիւնը բոլորովին առողջապահական պահանջների հակապատկերն է ներկայացնում, այդ տեսակ ցաւերը, այդ տեսակ վարակող ախտերը շատ մեծ սիրով ընդունում են, եւ միանգամ այդպիսի տեղերում բուն դրած վարակող ախտը հեշտութեամբ էլ չէ հեռանում այն տեղից։ Այդպիսի տեղերում խօլէրան մտնելով օգուտ է քաղում երկրի վատառողջ պայմաններից եւ հնձում է իւր զոհերին անարգել։ Այդպէս խօլէրան մտնելով Պօլիս՝ իւր ժամանակին շատ եւ ահագին քանակութեամբ զոհեր տարաւ, այն ինչ Եւրօպայի շատ տեղերում չը գտնելով իրեն յարմար գետին չը կարողացաւ մուտք գործել։

Թիւրքիայի կառավարութեան վերայ պարտք կայ դրած անյապաղ ամեն միջոցներ գործ դնելու այն տեղերում, որտեղ այդ ժանտախտը երեւացել է, նրա առաջքն առնելու համար։ Հիմա աւելի հեշտ է այդ անելու, որովհետեւ առաջուայ պէս հարկաւոր չէ քառասնօրեայ կարանտին, այլ տասն օրն էլ բաւական է։ Այժմ ապացուցուած է, որ խօլէրայով վարակվողի մէջ մէկ քանի օրումը երեւում է այդ ախտը։ Ուստի տասն օրուայ կարանտինը բաւական է այդ ախտով վարակուած երկրից եկողի համար։

Միեւնոյն ժամանակ կարելի է մտածել, թէ ինչ վատ եւ զարհուրելի հետեւանքներ կ'ունենանք, եթէ այդ երկրումը, այդ վարակուած տեղումը իսկոյն եւ խիստ կարանտին չը հիմնուի, հիմիկուայ հաղորդակցութեան հեշտութեան ժամանակը։ Երեւակայեցէք, մահմէտական ուխտաւորներից մէկը վարակվում է Ադէնում եւ գալիս է կարմիր ծովի վերայով Սուէզի ջրանցքով անցնում է եւ մնում է Կայրօ մի քանի օրուայ մէջ, եւ հէնց այդ քաղաքումը երեւան են գալիս նրա մէջ այդ ախտի նշանները եւ դա, որ առողջ եկել էր Կայրօ, մեռնում է։ Մէկ ուրիշը Կայրօից առողջ ճանապարհ է ընկնում դէպի Պօլիս եւ մի քանի օրումը արդէն Պօլիս է եւ Բօսֆորի ափումը երեւում է նրա մէջ այն ախտը, որը նա ստացել էր Կայրօում, իսկ դա երեւան եկաւ Պօլսում։ Այսպէս՝ մէկ վեց, եօթը օրուայ մէջ արեւելքից անցնում է այդ զարհուրելի ախտը Եւրօպա։

Հարկաւոր է, որ թէ Ռուսիայի եւ թէ եւրօպական պետութիւնների ներկայացուցիչները եռանդով եւ խստութեամբ հետեւեն այդ ժանտախտի առաջքն առնելու։ Որչափ էլ որ Դուռը բարի ցանկութիւն ցոյց տայ այդ գործում, որքան էլ որ նա խօլէրայի դէմ կարգադրութիւններ անէ, այնուամենայնիւ չէ կարելի վստահանալ թիւրք ծառայողների վերայ, որոնք պէտք է կատարեն կառավարութեան կարգադրութիւնները։

Այդ պատճառով լաւ կը լինի, որ եւրօպական տէրութիւնները խստութեամբ հսկեն Դրան կարգադրութիւնների վերայ։ Լաւ կը լինի, եթէ եւրօպական տէրութիւնները միջազգային առողջապահական միութիւն կազմեն արեւելքի համար, որի մէջ բացի հսկողութեան եւ ծառայութեան համար բանիմաց մարդիկներից նշանակուած լինէին մասնագէտ բժիշկներ։ Խօլէրան վերաբերում է մարդկութեան անխտիր, եւ ամենից աւելի լուսաւոր աշխարհի վերայ պարտք կայ դրած նրա դէմ մաքառելու, վասնզի լուսաւոր աշխարհն ունի նրան ոչնչացնելու թէ ույժ եւ թէ միջոցներ։ Քանի որ այդ ցաւը չէ տարածուել, պէտք է օրով առաջ սկսել, եւ այդ գործումը կարող էին արեւելքում, Փոքր-Ասիայում գտնվող հիւպատոսները իրենց ծառայութիւնը մատուցանել։

Այստեղ աւելորդ չէր լինել ուշադրութիւն դարձնել Հայաստանում բնակվող հայերի առողջապահական պայմանների վերայ։ Մի երկրի լուսաւորութեան աստիճանը կարելի է չափել, ասում էր իւր դասախօսութեան մէջ երեւելի գերմանացի քաղաքատնտես պրօֆէսսօր Ռօշէրը, այն երկրի բնակիչների բանեցրած սապոնի որքանութեամբը։ Պէտք է տեսնել թէ արեւելքում հայերի մէջ մաքրութիւնը ինչ փոքր, ոչինչ նշանակութիւն ունի. պէտք է տեսնել, թէ ինչ գոմերում ինչ տեսակ անասունների հետ միասին խեղդուած մուխի մէջ, սեղմուած բնակվում են հայ գիւղացիները. պէտք է տեսնել, թէ ինչպէս գլուխները ոսկէ զարդերով բեռնած կեղտոտ շապիկը հագած շրջում են հայ կանայք։ Ինչպէս Եւրօպայում մաքրութիւնը ընկերական կենցաղավարութեան մէջ պահանջ է, այնպէս կարծես թէ արեւելքում կեղտոտութիւնը լինի պահանջ։ Արդեօ՞ք ժամանակ չէ, որ հայ մարդիկ, հայ կանայք, հայ աղջիկներ իրենց ուշադրութիւնը դարձնեն մաքրութեան վերայ, ոչ թէ իբրեւ մի շռայլութեան, այլ իբրեւ մի կենսական պահանջի վերայ։ Մինչեւ ե՞րբ նոր սերունդը մնայ թէ ներսից, թէ դրսից կեղտոտութեան մէջ։

Ս. Ս.

## ԱԶԳԱՅԻՆ

### Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Օգոստոսի 17-ին սկսուեցան քննութիւնները արքունական բարձր ուսումնարաններում։ Ամեն կողմից եկել էին ուսանողները քննութիւն տալու համար, բայց բոլորը չը կարողացան արժանանալ քննութեան՝ շատերի խնդիրը չ'ընդունեցին տեղ չունենալու պատճառաւ, իսկ 455 ուսանողներից, որոնք քննութիւն բռնեցին, ընդունուեցան միայն 136 մարդ տեխնոլօգիքական ինստիտուտում եւ 70 մարդ ստրօյիտելնի ուսումնարանում։ Միւս ուսումնարաններում դեռ նոր սկսեցին քննութիւնները, բայց հարկաւոր է նկատել՝ որ այն տեղերումն էլ շատ փոքր տեղ կայ եւ ընդամենը կը լինի 150 տեղ։ Ապա ո՞ւր կը գնան նորանք, որոնց չը յաջողուեցաւ մտնել ոչ մի ուսումնարան. ինչ կը լինի վերջը այդպիսիների եւ ինչ է սպասում նորանց ապագայում։ Գալով հեռաւոր քաղաքներից մեծամեծ դժուարութեամբ, որովհետեւ ուսանողներից շատերը չքաւոր ծնողաց որդիք են, այստեղ եւս մեծ նեղութիւն են քաշում, որովհետեւ տեղ չը կայ։ Ի՞նչ անէ խեղճ ուսանողը, ո՞ր ջուրը ընկնէ։ Ինչ հարկաւոր էր, ինչ որ կարող էր՝ իւր ոյժին չափ գործեց, հասաւ նա վերջապէս այն կէտին, երբ մարդ ընդունում է իրեն համար ճանապարհ եւ հանդարտ քայլերով գնում է առաջ։ Բայց թէ ո՞րքան արգելք տիրում է այդ ճանապարհի վերայ, այդքանը անկարելի է ասել։ Ի՞նչ մեղաւոր է ուսանողը՝ երբ նորան չեն տալիս այն, ինչ որ նա իրաւունք ունի ստանալ, ցանկալ ի բոլոր սրտէ եւ որի համար նա աշխատել է, զրկուելով շատ անգամ ամեն տեսակ բաներից, մինչեւ անգամ առողջութիւնից։ Եւ այդ բոլոր նեղութիւնները նա կրել է նորա համար, որ վերջը կարողանայ պիտանի անդամ լինել հասարակութեան եւ ազգի համար։ Որքան գեղեցիկ պլաններ է շինում ուսանողը իւր մտքում եւ որքան նա ուրախանում է այդ մտքերով, որոնք մի օր պիտի իրագործուին։ Աւա՜ղ. . . գալիս է ուսանողը ու մնում է գիտութեան կենդրոնի մէջ, բայց նորա բոլոր պլանները ջարդ ու փշուր են լինում այնպէս, ինչպէս ծովի ալիքները, երբ կատաղի քամու ժամանակ դիպչում են ժայռերին եւ փշրատվում են։

Այո, այդպիսի ժայռեր այստեղ շատ կան եւ յաղթել նորան շատ դժուար է։ Անյաջողութիւնը մի կողմից, միջոցների պակասութիւնը միւս կողմից խիստ թուլացնում են ուսանողի վառ ոգին. փոքր առ փոքր նա համոզվում է, որ չունի ուժ այլ եւ տանելու այդ տեսակ նեղութիւնները եւ հանգամանքներից ստիպուած գոլով, նա ընտրում է մի այլ ճանապարհ, որի ուր տանելը նորան յայտնի չէ։ Ուրեմն ինչ կարելի է սպասել այդպիսիներից եւ ինչ իրաւունք ունենք պահանջելու։ Պահանջել կարող ենք նոցանից, որոնց տալիս ենք շատ, բայց տարաբաղդաբար շատերն արժանացել են քչերը, իսկ բազմամասնութիւնը մնացել է մի տեսակ անորոշ դրութեան մէջ, որը չունի ոչ անցեալ եւ ոչ ներկայ։ Զարմանալի երեւոյթ չի պիտի համարենք այն, երբ տեսնում ենք զանազան քաղաքներում անբան երիտասարդներ․ սոքա այն մարդիկն են, որոնք դեռ կեանքի հետ չը ծանօթացած, աշխարհ դուրս չեկած, արժանացան ճաշակել հէնց առաջին քայլերում դառն աշխատանաց վարձը եւ անյարմարութիւն։ Ուսանողաց կեանքը չէ տուել նորանց այնքան, որ կարողանան փոքր ինչ ազատ նայել կեանքի վերայ, իսկ անփորձութիւնը լաւը եւ վատը որոշել։ Ուսանողը մի անգամ զրկուելով նորանից, ինչ որ նորա համար սուրբ եւ ազնիւ էր, սառնասրտութեամբ նայում է իւր շուրջը գործող անձանց վերայ եւ կեանքը նորա համար նմանում է մի կանգնած ջրին, որը արեւի ճառագայթներից տաքանալով, ցամաքում է իսպառ։ Եւ չը կա՞յ արդեօք մի միջոց, փրկելու մի հնար հասարակութեան նիւթական օժանդակութեամբ, համալսարանների դռները բացելու այդպիսիների համար կամ աւելացնելու բարձր ուսումնարանների թիւը։

Յ․ Սաղոմոնեանց։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԲՈՒԼՂԱՐԻԱ

«Temps» լրագրին հաղորդում են Սօֆիայից, որ պատրաստից յետոյ, սեպտեմբերի 14-ին արքեպիսկոպոսը կարդաց ամբիոնից բուլղարական իշխանի հրովարտակը պետական խորհուրդը հիմնելու մասին։

Հրովարտակը յայտնում է, որ բուլղարական իշխանը հաստատում է պետական խորհուրդ, որ դա լինի իւր աջակիցը երկիրը կազմակերպելու համար։ Այս խորհուրդը կազմւում է այն հիմունքների վերայ, որը ցոյց է տուած սահմանադրութեան նախագծի մէջ, եւ որը առաջարկել էր Աղեքսանդր II-ի կառավարութիւնը Տիրնովում հաւաքուած ազգային ժողովին, բայց անընդունելի էր եղել ժողովից։

Իշխանը յայտնում է, որ նա այս նախագիծը վերականգնում է ոչ թէ դէպի Թագաւոր-Ազատչի յիշատակին ունեցած բարեմտութեան համար, այլ իւր ներքին համոզմամբ, որ այդ նախագիծը Բուլղարիային օգտաւէտ է։

Իւր ազատամտութիւնով իշխանը թողնում է ժողովրդին ազատ ընտրելու խորհրդի երկու-երրորդական անդամները, այն ինչ առաջուան նախագիծը ենթադրում էր թուերի կողմանէ հաւասարութիւն թէ ընտրուածների եւ թէ նշանակուածների մէջ։

Պետական խորհուրդը կազմուած է ութ անդամներից, որոնք ընտրվում են կրկնակի ընտրութիւններով, չորս անդամներ, որոնց իշխանն է նշանակում, եւ երեք անդամներ, որոնք խորհուրդին ներկայ են լինում իբրեւ դաւանութիւնների ներկայացուցիչներ—յունադաւան, մահմեդական եւ հրէական։ Պաշտօնեաները օրէնքով արդէն համարվում են խորհրդի անդամ, բայց միմիայն խորհուրդ տալու իրաւունքով եւ այն խնդիրներում միայն, որոնք իրենց բաժանմունքներին են վերաբերում։

Ընտրելի անդամները փոխվում են ամեն վեց տարին մի անգամ, իսկ նշանակուածները—ամեն երեք տարին։

Պետական խորհրդի վերայ պարտք է դրած մշակել ամեն օրէնքների նախագծերը եւ բոլոր վարչական կանոնադրութիւնները, կարծիք յայտնել այն ամեն խնդիրների մասին, որոնք կառավարութեան ձեռքով մտնում են խորհրդի մէջ, վճռել բոլոր ծախքերը ինչպէս պահեստի, նոյնպէս բիւջէի գումարներից, վճռել արտօնութիւն տալու մասնաւոր գործակատարներին եւ հաստատել պայմանագրերը, որոշում տալ վարչական դիմադրութեանը, թոյլտուութիւն տալ համայնքներին, գաւառներին, նահանգներին փոխառութեան, կատարած նախահաշիւների վերաքննութեանը, եւ վերջապէս՝ մասնացոյց անել իշխանին, երբ հիմնական օրէնքների խախտումն լինի։

---

Սեպտեմբերի 16-ին, Ստրասբուրգ քաղաքի Ֆրանսիայի հետ միացման տարեդարձի օրը Ելզաս-Լօթարինգեան հայրենասէրները Փարիզում զարդարեցին ծաղիկներով եւ պսակներով Ստրասբուրգի արձանը, որը գտնվում է «համաձայնութեան» հրապարակի վերայ։ Այս ցոյցը կրկնվում է ամեն տարի, թէպէտ արդէն տասը տարի է, որ Ստրասբուրգը կրկին գերմանական քաղաք է դարձել։

—

Թունիսում երկիւղ կայ, որ հէնց որ որ Ֆրանսիացիներն արշաւեն Կէյրուանի վերայ, արաբացիները իսկոյն կը կոտորեն բոլոր եւրոպացիներին։ Ամենքը ցանկանում են, որ Ֆրանսիական զօրքերը գրաւեն Թունիսը, եւ յոյս ունին, որ Ռուստանին կը յաջողվի համոզելու բէյին, որ նա այդ ընդունի։

—

Ֆրանսիական արտաքին գործերի պաշտօնեան իրաւունք է տուել Թունիսի ֆրանսիական ներկայացուցիչ Ռուստանին դատ սկսելու «Intransigeant» լրագրի դէմ, որը Ռուստանին եւ թէ Գամբէտային մեղադրում է կեղտոտ դրամական խարդախութեան մէջ։ Բայց անհաշտ լրագիրները շարունակում են պնդել այդ մեղադրանքի վերայ։

—

«Times» թերթին հեռագրում են, Ֆիլադելֆիայից, որ նախագահ Արտուրը շատ զգոյշ է իւր շրջելումը, որովհետեւ լուր է տարածվել, որ նրան սպանել են կամենում։ Ռեսպուբլիկանութիւնը այդ լուրին մեծ նշանակութիւն չէ տալիս։

—

Ստրասբուրգ քաղաքը Ֆրանսիայի հետ միանալու երկուհարիւրամեայ տարեդարձի առթիւ «Revue Alsaciénne» թերթը այդ օրը բոլորովին նուիրած էր այդ քաղաքի Ֆրանսիայի հետ միանալու պատմութեանը, սկսելով 1681-ի պայմանագրից, որով գերմանական կայսրը յանձնում էր Ստրասբուրգ քաղաքը Ֆրանսիական թագաւորին։ Այդ թերթը արտատպում է այդ առիթով Ֆրանսիական պատմութիւնից պ. Անրի Մարտենի հետեւեալ խօսքերը․ «Քաղաքական դաշնակցութիւնը անքակտելի է։ Ապագան Աստուծոյ ձեռքին է, բայց ոչ ոքի ուժը չի համնիլ ոչնչացնել կամ դարձնել անցեալը»։

## ՄԵՂՈՒԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)։

**ՎԻԵՆՆԱ**, 28-ին սեպտեմբերի։ Երկուշաբթի օր յանկարծակի մեռաւ սրտի հարուածից Աւստրիա-Ունգարական արտաքին գործերի պաշտօնեայ բարօն Հայմէրլէն։

**Ս․ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ**, 29-ին սեպտեմբերի։ 27-ին սեպտեմբերի կայացած խորհրդում որոշվել է․ 1) Պատենտի համար հարկի աւելացնելը չի կարելի յարմար միջոց համարել արքեցողութեան վերջացնելու․ 2) ըմպելեղէնի հիմնարկութիւնների թիւը որոշելու համար հարկաւոր է զեմստվօների մէջ գործողների մասնակցութիւնը․ 3) 28-ին սեպտեմբերի որոշվել է յայտնել ելեւմտից պաշտօնեային, որ ըմպելեղէնի խնդրի մասին լինելու աշխատութեան համար հարկաւոր է հինգ, վեց շաբաթ․ 4) հարկաւոր է, բացի որոշելուց ըմպելեղէնների համար հիմնարկութիւնների թիւը, եւ որոշել տեղերը, որտեղ չի կարելի բանալ․ 5) հողի տէրը վերապահում է յայտնելու իրաւունքը, համաձայն է, թէ համաձայն չէ հողը տալու ըմպելեղէնների հիմնարկութեան համար։

«Петербургскія Вѣдомости» հաղորդում են լուր, որ պետական խորհուրդը մտնելու են եւ անդամներ զեմստվօյի փորձառու անձինքներից։ «Новое Время» հաղորդում է․ Անգլիայի դեսպանապետ Տօրնտօնը եկաւ։ Պետական բանկը երեկ ծախեց նոր փոխառութեան բոլոր տոմսերը։

**Ս․ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ**, 29-ին սեպտեմբերի։ Այսօր սկսուեցաւ քննութիւնը «чернаго передѣла»-ի գործի։ Նիստը բացուեցաւ բաց դռների մօտ. մեղադրւում է Մուրավիեվը, պաշտպանում են՝ Տուրչանինով, Լէվէնսօն, Միխայլով։ Դահլիճի մէջ հասարակութիւնը շատ է, բոլոր դատարանական գործողութիւնները տեղի ունեցան հրապարակաւ։ Նախագահը յայտնեց, [illegible] պահանջին համաձայն, դատարանական պալատը վճռել է, որ գործը քննուի փակ դռներով։ Հասարակութիւնը հեռացաւ։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԻՐԺԱ

27-ին սեպտեմբերի.

| | | |
|---|---|---|
| Արք․ բանկ․ 1-ին . . . | 96 | 19. |
| — — 2-րդ . . . . | 93 | 12 |
| — — 3-րդ . . . . | 93 | 75 1/2 |
| — — 4-րդ . . . . | 92 | 37 |
| Վիճակահ․ 1-ին . . . . | 224 | — |
| — — 2-րդ . . . . | 218 | 25 |
| Արեւ․ փոխառ. 1-ին . | 90 | 75 1/2 |
| » » 2-րդ . | 90 | 75 1/2 |
| » » 3-րդ . | 91 | — |
| Լօնդօն . . . . . . | 26 | — |
| Համբուրգ . . . . . | 221 | 51 |
| Ամստերդամ . . . . | 131 | — |
| Փարիզ . . . . . . | 274 | 25 |
| Ոսկի . . . . . . | 7ռ. | 63 կ. |

Բիրժայի վիճակը հանդարտ է։

## ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Խմբագրութիւնից անկախ պատճառով ստիպուած ենք «Մեղուն» այսօր կէս թերթով հրատարակել։

⁂

Շնորհակալութեամբ ստացանք պպ․ Գ․ Տէր-Ղեւոնդեանից եւ Գ․ Խաչատրեանից նրանց թարգմանած «Բարոյական վէպ—Աղքատ մանուկ» գրքոյկը։ Գինն է 20 կոպէկ։ Ծախվում է «Կեդրոնական» եւ «Կովկասեան» գրավաճառանոցներում։

⁂

Շնորհակալութեամբ ստացանք ատամնաբոյժ պ․ Վալտէրից «Правила для предохраненія зубовъ» տետրը։

⁂

Շնորհակալութեամբ ստացանք բժ․ պ․ Ամիրովից նրա աշխատասիրած «Замѣтки объ ощущеніяхъ и страстяхъ» գիրքը։ Գինը մի ռուբլի է։

⁂

ՇՈՒՇԻԻՑ մեզ գրում են, որ Րաֆֆին այնտեղից անցնելով գնացել է Տաթեւ։ Մի քանի օր մնացել է Շուշիում. բայց պատշաճ ընդունելութիւն չէ գտած, մանաւանդ երիտասարդներից։ Սորա պատճառն էլ ինքը պ․ Րաֆֆին է եղած։

⁂

Շուշիի ազգային հոգեւոր դպրոցի նորընտիր հոգաբարձութիւնն, արժ․ հայր Կ․ վարդապետ Ակվաղեանցի նախագահութեամբ յայտնվել է պաշտօնապէս թատերասէր խմբին, որ ուսումնարանի դահլիճում քանդէ բեմն եւ դահլիճը դատարկէ, հակառակ դէպքում հոգաբարձութիւնը կը սեպհականէ թատրոնի բոլոր կահ կարասիքը։

⁂

ՇՈՒՇԻԻՑ գրում են, որ նահանգապետը մերժել է այնտեղ հասարակական գրատուն բանալու խնդիրքը պատճառաբերելով, որ թուրքերը չեն մասնակցում; իսկ միայն հայերին թոյլ տալ չէ կարելի։

⁂

Լսում ենք, որ Կ․ Պօլսի «Միացեալ ընկերութիւնը» յայտնում է երկու պատուիրակ խրկելու Թիֆլիզ ուսուցչական ժողովների ներկայ գտնվելու համար։ Բայց այդ ժողովները յետաձգուած են մինչեւ առաջիկայ ամառն, ուստի եւ ի զուր «Միացեալ ընկերութիւնը» իւր պատուիրակներին այժմ չը ղրկի։

⁂

«Մեղուի» մէջ հաղորդել էինք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը տեղւոյ կլասիկական գիմնազիոնի յիսնամեայ յօբելեանի օրը պատգամաւոր էր խրկել բժշկապետ մեծ․ պ․ Ա․ Բաքայեանին եւ ուղերձ ուղղել։ Ահա այն ուղերձի թարգմանութիւնը։

«Թիֆլիզի արական գիմնազիոնի յիսնամեայ յօբելեանի օրվայ համար։

«Ներսիսեան հոգեւոր դպրոցի հոգաբարձութեան կողմից։

«Հայոց Ներսիսեան հոգեւոր դպրոցն իբրեւ ամենահին ուսումնարանը Թիֆլիզի սկզբումն էր միակ ուղեցոյց, իսկ յետոյ մտաւոր վկայ Թիֆլիզի ներկայ գիմնազիոնի զարգացման զանազան փոփոխութեանց—ազնուականաց ուսումնարան, յետոյ ազնուական պանսիօն, ազնուականաց գիմնազիոն եւ այլ անուամբ։ Ներսիսեան հոգեւոր դպրոցն, որ արդէն ութը տարի առաջ համեստութեամբ տօնեց իւր յիսնամեակը, միշտ սիրով նայել է Թիֆլիզի գիմնազիոնի նշանաւոր յառաջադիմութեանց վերայ, գիմնազիոնի, որ անտարակոյս ամենայնւ հաստատութիւնն է գիտութեան լոյս եւ քաղաքակրթութեան բարիքը տարածելու գործում բոլոր ազգերի մէջ, որ բնակվում են Կովկասում.

«Ահա ինչու մեր առաջին հայ հոգեւոր դպրոցը ուրախութեամբ շնորհաւորում է Թիֆլիզի գիմնազիոնի գոյութեան կէսդարի լրումն եւ յայտնում է նրան իւր մտերիմ ցանկութիւնը, որ այսուհետեւ եւս շատ տարիներ շարունակէ իւր լուսաւորչական կոչումն։

«Պատգամաւոր հոգաբարձութեան գիմնազիոնի յիսնամեայ յօբելեանի ժամանակ՝

Ա․ Բ․ Բաքայեան։

«Հոգաբարձութեան նախագահի վիճակաւոր առաջնորդի բացակայութեան պատճառաւ՝ հերթական հոգաբարձու»։

⁂

Պ․ Ճանապարհորդը ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում է․—Նորերումս բաղդ ունեցայ անցնել Քութայիսով. մնալով այնտեղ մի քանի օր, այցելեցի իմ բարեկամներիս, այնտեղ պատահեցայ հայոց ծխական ուսումնարանի աշակերտուհեաց, որոնք մեծ տպաւորութիւն արին ինձ վերայ իրանց հայերէն խօսակցութեամբ եւ ազդու պատասխաններով։ Զմայլվում էի, երբ համեստ օրիորդները դեղեցիկ, մաքուր եւ հայկական արտասանութեամբ հետս խօսում էին։ Հարցրի, ով է ձեր հ. լեզուի ուսուցիչը, պատասխանեցին «պ. Ամիրաղեանցը» որը աւարտել է Ներսիսեան դպրանոցում։ Ես համոզվեցայ, որ պ․ Ա․ Ամիրխանեանը եւ միւս զորա նմանները ի զուր կրքից գրգռուած պախարակում են խեղճ ուսումնարանի անունը։

Ցանկալի է, որ Վրաստանի միւս հայ ուսուցիչներն եւս այդպէս եռանդով աշխատեն։

⁂

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են.—Երեցփոխան պ․ Վանցեանի անկանոն, մանրմունր թղթերի վրայ գրած հաշիւներին պպ․ հաշուատեսները չվար մնալով, ինչ ընելները չեն իմանում։ Ուստի ամսոյս 14-ին գրաւոր յայտնեցին հոգեւոր կառավարութեանը, որ հաշիւ անկարելի է տեսնել, ժողովուրդը թող ընտրէ 15 կամ 20 պատգամաւորներ, որպէսզի միասին խորհեն եւ մի ընթացք տան գործին։

Կարծեմ բոլորովին աւելորդ է պատգամաւորներ, քանի որ պ․ Վանցեանը յընթացս երեք տարուայ չ՚ունի վարած կանոնաւոր կերպով իւր երեցփոխանական հաշիւները, ուրեմն պատգամաւորներն էլ որ լինեն, անկարելի է նորանից կանոնաւոր հաշիւ տեսնել։ Առանց ժամանակ կորցնելու թող ժողովուրդը տայ լիակատար իրաւունք պպ․ հաշուատեսներին եւ նոքա գործը յանձնեն մարմնաւոր իշխանութեան, որ քննելով հաշիւները, համաձայն օրէնքի վարուի պ․ Վանցեանի հետ։

Խմբագիր Պ․ ՍԻՄՈՆԵԱՆՑ․
Հրատարակիչ Հ․ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 30-го Сентября 1881 г.   Տպարան Մ․ Ռօտինեանցի եւ ընկ․   Տուն բժշկապետ Մ․ Ռօտինեանցի։